

ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի
ապրիլի 10-ին գումարված նիստերի մասին**

N ը/կ	Հարցի անվանումը	Հեղինակը	Ծանոթություն
1	2	3	4
1.	«Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիրը վավերացնելու մասին	ՀՀ կառավարություն Կ-288-26.03.2018- ԱՀ,ԵԻ Կարեն Նազարյան Անհետաձգելի	Քննարկվեց և օրենքն ընդունվեց՝ 95 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
2.	«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ԱԺՈ-267-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին	ԱԺ պատգամավորներ Գալուստ Սահակյան, Ֆելիքս Յուլակյան, Հակոբ Բեգլարյան, Կարինե Աճեմյան, Ալիկ Սարգսյան, Մուրադ Մուրադյան, Ռուզաննա Մուրադյան Պ-214- 14.12.2017,05.03.2018- ՊԻՄԻ	Քննարկվեց և 62 կողմ, 32 դեմ, 0 ձեռնպահ ձայներով ընդունվեց ՀՀ Ազգային ժողովի որոշումը:

<p>3.</p>	<p>ա. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին, բ. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, գ. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին, դ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ե. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին</p>	<p>ՀՀ կառավարություն Կ-233- <u>22.12.2017,09.04.2018-</u> ՏՏԳԲ Տիգրան Խաչատրյան</p>	<p>Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 90 կողմ, 4 դեմ, 0 ձեռնպահ ձայներով</p>
<p>4.</p>	<p>«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին</p>	<p>ԱԺ պատգամավորներ <u>Հակոբ Հակոբյան,</u> <u>Աղվան Վարդանյան,</u> <u>Արսեն Միխայլով,</u> <u>Մարինա Մարգարյան,</u> <u>Մարգարիտ Եսայան,</u> <u>Զեմմա Բաղդասարյան</u> Պ-266- <u>13.02.2018,05.04.2018-</u> ԱԱ</p>	<p>Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 93 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով</p>

5.	«Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին	ՀՀ կառավարություն Կ-283-16.03.2018-ՖՎ Արսեն Հարությունյան Անհետաձգելի	Քննարկվեց և օրենքն ընդունվեց՝ 62 կողմ, 32 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
6.	«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին» հաղորդում	287-22.03.2018-ՊԻՄԻ Տիգրան Մուկույան	ՀՀ Ազգային ժողովը քննարկեց և հաղորդումն ընդունեց ի գիտություն:

Ապրիլի 10-ից ապրիլի 12-ի նիստերի ընթացքում՝

- Աժ նախագահ Արա Բաբլոյանը հայտարարեց, որ, քանի որ Հանրապետության նախագահը ապրիլի 9-ին ստանձնել է պաշտոնը և, հետևաբար, Կառավարությունը հրաժարական է ներկայացրել, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 140-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչապետի ընտրության հարցը կքննարկվի ապրիլի 17-ին՝ ժամը 12.00-ին, իրավունքի ուժով գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստում:

- Հայտարարությամբ հանդես եկան 17 պատգամավոր:

- 12 պատգամավոր բանավոր հարցերով դիմեցին կառավարությանը: